ԵՆԹԱԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան 28.07.2018թ.

«ԱՆՌԻՎԱ-ՏՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը **(պետական գրանցման համար՝ 278.110.756354, ՀՎՀՀ՝ 00459822)** ի դեմս տնօրեն Հ. Ստամբուլյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետևնա՝Գործակալ), մի կողմից, և «_____» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը **(պետական գրանցման համար՝——————, ՀՎՀՀ՝——————)**, ի դեմս տնօրեն_____, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ նաև՝ Ենթագործակալ), մյուս կողմից (Գործակալի և ենթագործակալի համատեղ հիշատակման դեպքում այսուհետ նաև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Ենթագործակալը պարտավորվում է իր անունից և Գործակալի հաշվին իրացնել «ԱՆՌԻՎԱ-ՏՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Պրինցիպալ Կազմակերպությունների (այսուհետ նաև՝ Կազմակերպություններ), ինչպես նաև «ԱՆՌԻՎԱ-ՏՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Air Cairo ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև կնքված գործակալական պայմանագրերով Ընկերության և Պրինցիպալ Կազմակերպությունների կողմից առաջարկվող՝ ստորև նշված ծառայությունները (**այսուհետ նաև՝ Ծառայություններ**).

1.1.1. կեցության վայրի ապահովում
1.1.2. անհատական և/կամ խմբակային փոխադրումներ
1.1.3. էքսկուրսիաների կազմակերպում և իրականացում
1.1.4. այլ ծառայություններ
1.1.5. ավիատոմսերի վաճառք

1.2. Ծառայությունների արժեքը և պայմանները, ինչպես նաև Պրիցիպալ Կազմակերպությունների վերաբերյալ տվյալները հասանելի են Գործակալի պաշտոնական կայքէջում՝ www.egypt.anrivatour.am **(այսուհետ նաև՝ Կայք)**:

1.3. Ենթագործակալն իրավունք ունի Պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունները իրացնել առանձին-առանձին:

1.4. Սույն Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ծառայությունները իրացնելիս Հաճախորդների (զբոսաշրջիկների) հետ իրավահարաբերություններում իրավունքներ և պարտականություններ առաջանում են ամիջականորեն ենթագործակալի համար՝ բացառությամբ 1.1.5 կետով նախատեսված Ծառայության իրացման դեպքում:

1.5. Այն դեպքում, երբ Ենթագործակալի իրացրած Ծառայությունը ներառում է սույն պայմանագրի 1.1.5 կետով նախատեսված ավիատոմսերի վաճառքը, ապա կողմերի միջև հարաբերությունները՝ ավիատոմսերի վաճառքի մասով, կարգավորվում են կողմերի միջև 28. 07. 2018թ. կնքված Հանձնարարության Պայմանագրով:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Գործակալն իրավունք ունի

2.1.1. Ենթագործակալին տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ:
2.1.2. Պահանջել հաղորդել Պայմանագրի կատարման հետ կապված բոլոր տեղեկությունները:
2.1.3. Պատվիրված ծառայությունների դիմաց Ենթագործակալից պահանջել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցել Ծառայության արժեքը:
2.1.4. Պահանջել տրամադրել ամսական ամփոփ հաշվետվություն՝ Կայքի միջոցով կատարված ամրագրումների և դրանց փաստացի իրացման գների մասով:
2.1.5. Ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը՝ առնվազն 10 (տասը) օր առաջ գրավոր տեղեկացնելով Ենթագործակալին:

2.2. Գործակալը պարտավոր է

2.2.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 24 ժամվա ընթացքում Ենթագործակալին տրամադրել Կայքի մուտքանուն և գաղտնաբառ՝ ուղարկելով համապատասխան պարունակությամբ էլեկտրոնային նամակը Պայմանագրի 11.8 կետում նշված Ենթագործակալի էլեկտրոնային փոստի հասցեին:
2.2.2. Տեխնիկական խնդիրների պատճառով Կայքի անհասանելիության դեպքում տեղյակ պահել Ենթագործակալին:

2.3. Ենթագործակալն իրավունք ունի

2.3.1. Պայմանագրով սահմանված կարգով Գործակալին վճարման ենթակա գումարներից հաշվանցել Ենթագործակալական վճարը:
2.3.2. Պայմանագրի պատշաճ կատարման համար Գործակալից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:

2.4. Ենթագործակալը պարտավոր է

2.4.1. Պարտավորությունները կատարել պատշաճ՝ Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:
2.4.2. Ծառայություններն իրացնել Կայքում նշված գնից ոչ պակաս, որը ներառում է Ենթագործակալի վարձատրությունը: Ծառայություններն իրացվում են ՀՀ դրամով:

2.4.3. Ծառայությունների իրացման յուրաքանչյուր դեպքում հաճախորդի (զբոսաշրջիկ) հետ կնքել գրավոր պայմանագիր՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: Մինչև հաճախորդի (զբոսաշրջիկ) հետ պայմանագիր կնքելը Ենթագործակալը պարտավորվում է զբոսաշրջիկին տրամադրել «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված հետևյալ տեղեկատվությունը՝

- անձնագրային, մուտքի և ելքի պահանջներ,
- ժամանման կամ տարանցիկ երկրներում՝ վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման, ինչպես նաև առողջության հետ կապված սահմանափակումների և պահանջների մասին (անհրաժեշտ ներարկումներ և այլն),
- տրանսպորտային տուրքեր և հատուկ գանձումներ,
- ուղևորային փոխադրումների ընթացքում պահանջվող մաքսային սահմանափակումներ,
- դրամային փոխարժեք,
- դժբախտ պատահարների դեպքում, ինչպես նաև առողջության ու կյանքի ապահովագրության հետ կապված պահանջների կամ երաշխավորությունների մասին
- ժամանման երկրների ազգային սովորույթների, կրոնական ծեսերի, սրբավայրերի, բնության, մշակույթի, պատմության և զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող այլ օբյեկտների, հատուկ պահպանվող հուշարձանների, օրենսդրական, կրոնական պահանջների և արգելքների վերաբերյալ այնպիսի տեղեկատվական նյութեր, որոնք անհրաժեշտ են շրջագայության ընթացքում:

2.4.4 Զբոսաշրջիկի (հաճախորդ) հետ կնքվող պայմանագիրը պետք է պարունակի համապատասխան նշում Ենթագործակալի կողմից Պայմանագրի 2.4.3. ենթակետերով սահմանմված տեղեկատվությունը զբոսաշրջիկին տրամադրելու մասին:

2.4.5 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հաստատում են, որ Պայմանագրի 2.4.3 կետով սահմանված պայմանների խախտման հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների ռիսկը, այդ թվում՝ հաճախորդներին պատճառված վնասները հատուցելու պարտականությունն ամբողջությամբ կրում է ենթագործակալը:

2.4.5. Գործակալի կայքից օգտվելու համար տրամադրված մուտքանունն ու գաղտնաբառը չփոխանցելել երրորդ անձանց, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանց գաղտնիության պահպանման համար: Սույն կետով սահմանված պարտավորության չկատարման պատճառով առաջացած բացասական հետևանքների ռիսկը կրում է Ենթագործակալը:

2.4.6. Կայքում իր անձնական հաշվի չարտոնված օգտագործման դեպքի հայտնաբերման մասին անհապաղ տեղեկացնել Գործակալին: Սույն կետով սահմանված հանգամանքի առկայության պարագայում Գործակալը կասեցնում է Ենթագործակալի անձնական հաշիվը, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի լիազոր ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

3. Վաուչեր

3.1 Այն դեպքում, երբ Ծառայությունը ներառում է պայմանագրի 1.1.1 կետով նախատեսված կեցության վայրի ապահովման ծառայություն, ապա յուրաքանչյուր նման ծառայության իրացման դեպքում Ենթագործակալի անձնական հաշվին ուղարկվում է վաուչեր, որը պետք է պարունակի տեղեկություններ Ծառայությունը մատուցողի և ստացողի (զբոսաշրջիկի) վերաբերյալ:

3.2 Վաուչերը պարտադիր ենթակա է ներկայացման Ծառայությունները մատուցողին:

4 Վճարման կարգը և պայմանները

4.1 Ծառայությունների ամրագրումն հաստատելու պահից հետո 48 ժամվա ընթացքում Ենթագործակալը պարտավոր է Պայմանագրում նշված Գործակալի բանկային հաշվին փոխանցել Ծառայությունների արժեքի 50 (հիսուն) տոկոսը՝ հաշվանցելով Ենթագործակալական վարձատրության գումարի 50 (հիսուն) տոկոսը: Ծառայությունների արժեքի մնացած 50 (հիսուն) տոկոսը ենթակա է փոխանցման Գործակալին ոչ ուշ, քան հաճախորդի թռիչքի օրավնից 20 (քսան) օրացուցային օր առաջ, որից պետք է հաշվանցվի Ենթագործակալական վարձատրության գումարի մնացած 50 (հիսուն) տոկոսը:

4.2 Եթե Ծառայությունների ամրագրման և թռիչքի օրվա միջև ընկած ժամանակահատվածը պակաս է 22 (քսաներկու) օրացուցային օրվանից, ապա Ծառայությունների ամրագրման ամբողջ գումարը՝ 100 (հարյուր) տոկոսը, որից ենթակա է հաշվանցման ենթագործակալական վարձատրության գումարի 100 (հարյուր) տոկոսը, ենթակա է փոխանցման Գործակալին Ծառայությունների ամրագրման հաստատման պահից հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում:

4.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև բոլոր վճարումներն իրականցվում են ՀՀ դրամով, կանխիկ կամ անկանխիկ եղանակով:

Անկանխիկ վճարման փաստը հաստատվում է դրամարկղային մուտքի անդորրագրով:

4.4 Ծառայության արժեքը համարվում է Կայքում նշված գինը:

4.5 Սույն հոդվածով սահմանված վճարման կարգը և պայմանները չեն գործում վաղաժամ ամրագարումների (early book) դեպքերում, որոնց համար գործում են վաղաժամ ամրագրումների համար հյուրանոցների կողմից սահմանված վճարման կարգերն ու պայմանները, որոնք հասանելի են www.egypt.anrivatour.am կայքում:

Սույն կետի իմաստով հյուրանոցների կողմից սահմանված վճարման կարգերն ու պայմանները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5 Ծառայությունների ամրագրումների չեղարկումը

5.1 Ծառայությունների հաստատված ամրագրումը թռիչքից առաջ մինչև 31 օր չեղյալ համարելու դեպքում, Գործակալը երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է տվյալ Ծառայությունների ողջ արժեքը Ենթագործակալին:

Այն դեպքում, երբ Ծառայությունների հաստատված ամրագրումը ներառում է նաև ավիատոմսերի վաճառքի ծառայություն, ապա թռիչքից առաջ մինչև 31 օր չեղյալ համարելու դեպքում Գործակալը երեք աշխատանքային օրվա ընթացքում Ենթագործակալին է վերադարձնում չեղարկված Ծառայությունների արժեքը՝ հաշվանցելով Կողմերի միջև կնքված ավիատոմսերի վաճառքի հանձնարարության պայմանագրով սահմանված 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ տուգանքը:

5.2 Հաստատված ամրագրումը թռիչքից նվազագույնը 21-ից 31 օր առաջ ընկած ժամանակահատվածում չեղյալ համարելու դեպքում Գործակալը չի վերադարձնում ծառայությունների արժեքի 30%-ը:

5.3 Հաստատված ամրագրումը թռիչքից նվազագույնը 11-ից 21 օր առաջ ընկած ժամանակահատվածում չեղյալ համարելու դեպքում Գործակալը չի վերադարձնում ծառայությունների արժեքի 50%-ը:

5.4 Հաստատված ամրագրումը թռիչքից նվազագույնը 11 օր առաջ ընկած ժամանակահատվածում չեղյալ համարելու դեպքում Գործակալը չի վերադարձնում ծառայությունների արժեքի 100%-ը:

5.5 Ցանկացած պարագայում Ծառայություններից հրաժարվելու դեպքում Գործակալն իրավունք ունի պահանջել Ենթագործակալից իր կողմից կատարված անմիջական կամ անուղղակի ծախսերի փոխհատուցում:

5.6 Ենթագործակալը կարող է հաճախորդի հետ կնքվող պայմանագրում նախատեսել սույն գլխի կարգավորումները:

6 Ենթագործակալական վարձատրությունը

6.1 Ենթագործակալի վարձատրությունը համարվում է հաճախորդի (զբոսաշրջիկ) կողմից վճարված գումարի (Ծառայության արժեքի) և Գործակալին փոխանցված գումարի տարբերությունը: Ենթագործակալի վարձատրությունը չի կարող պակաս լինել Ծառայության արժեքի 10 (տասը) տոկոսից:

6.2 Ենթագործակալը Ծառայությունների դիմաց վճարված գումարներից հաշվանցում է Ենթագործակալական վարձատրության գումարները՝ Պայմանագրի 4-րդ կետով սահմանված կարգավորումներին համապատասխան:

7 Կողմերի պատասխանատվությունը

7.1 Ենթագործակալը լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում Ծառայությունների ամրագրման հայտում Ծառայությունները ստացողի տվյալների ոչ ճիշտ լրացման պատճառով առաջացող անբարենպաստ հետևանքների համար:

7.2 Ենթագործակալը լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում Սույն Պայմանագրի 2.4.3-րդ, 2.4.4-րդ կետերով, 9-րդ հոդվածով նախատեսած պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում առաջացած անբարենպաստ հետևանքների համար:

7.3 Ծառայությունների ամրագրման դիմաց վճարումները Գործակալին փոխանցելու պարտավորությունը կետանցով կատարելու դեպքում Ենթագործակալը Գործակալի

պահանջով վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար փոխանցման ենթակա գումարի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ) տոկոսի չափով:
7.4 Գործակալի Կայքում Ենթագործակալի անունով բացված անձնական հաշվի մուտքանունն ու գաղտնաբառը երրորդ անձանց փոխանցելու դեպքում Ենթագործակալը վճարում է տուգանք՝ Ծառայությունների ամրագրման վերջին գործարքի գնի 50 (հիսուն) տոկոսի չափով, ինչպես նաև հատուցում է Գործակալի կրած վնասները:
7.5 Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
7.6 Գործակալը պատասխանատվություն չի կրում (ազատվում է պատասխանատվությունից) Կայքի աշխատանքի խափանումների համար:

8 Դիմումներ և բողոքներ

8.1 Ենթագործակալը պարտավոր է հաճախորդներին տեղեկացնել Ծառայությունների մատուցման կապակցությամբ առաջացած դիմումների և բողոքների քննարկման ստորև նշված կարգի մասին.

- դիմումները և բողոքները ներկայացվում են վաուչերում նշված կոնտակտային տվյալներով հասանելի անձանց՝ Ծառայությունների մատուցման ընթացքում
- դիմումներն ու բողոքները ներկայացվում են Ենթագործակալին՝ վերադարձի օրվանից հետո ոչ ուշ քան ջ (հինգ) օրվա ընթացքում

9 Գաղտնիություն

9.1 Կողմերը պարտավորվում են չհրապարակել սույն պայմանագրով սահմանված գործողությունների ընթացքի վերաբերյալ չճշտված և ոչ հավաստի այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել Կողմերի համբավին և հանգեցնել երրորդ անձանց մոտ Կողմերի գործունեության և մատուցվող ծառայությունների վերաբերյալ ոչ հավաստի կարծիքի ձևավորմանը:
9.2 Կողմերը պարտավորվում են որևէ ձևով չհրապարակել կամ երրորդ անձանց հայտնի չդարձնել սույն պայմանագրով Կողմերի տնտեսական գործունեությանը առնչվող և այլ տեղեկությունները:
9.3 Ենթագործակալը պարտավորվում է չհրապարակել և/կամ երրորդ անձանց հայտնի չդարձնել Հաճախորդների անձնական տվյալները:

10 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

10.1 Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի հետևանք, ինչպիսիք են՝ տարերային աղետները, հրդեհները, ջրհեղեղները, փոթորիկները, երկրաշարժերը, ռազմական գործողությունները, ահաբեկչական

ակտերը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ կամ անհատական իրավական ակտերը, ինչպես նաև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն անհնար դարձնող և սույն կետում չնշված այլ արտակարգ և անկանխելի հանգամանքներ, որոնք Կողմերը չեն կարող կառավարել (այսուհետ՝ Անհաղթահարելի ուժ) և Կոմղը/Կողմերը չեն կրում այդ հանգամանքների առաջացման ռիսկը: Կողմերն իրավունք ունեն հղում կատարել սույն կետով սահմանված պատասխանատվությունից ազատվելու հիմքերին միայն այն դեպքում, երբ Պայմանագրով ստանձնած պարտավորության չկատարման և Անհաղթահարելի ուժի միջև առկա է ուղղակի պատճառահետևանքային կապ:

10.2 Սույն պայմանագրի8.1 կետով սահմանված հանգամանքների առկայության դեպքում պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է Անհաղթահարելի ուժի գործողության ժամկետի չափով:

10.3 Անհաղթահարելի ուժի առկայության դեպքում Կողմերը պետք է անհապաղ միմյանց գրավոր տեղեկացնեն այդ հանգամանքների առաջացման, ինչպես նաև վերացման մասին, ընդ որում՝ վերանալուց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում:

10.4 Անհաղթահարելի ուժի գործողությունը երեք ամսից ավել տևելու կամ նման եզրահանգման համար բավարար հիմքերի առկայության, ինչպես նաև Պայմանագրով ստանձնած պարտավորություններն անհնար դարձնող նորմատիվ իրավական ակտի հրապարակման դեպքում Կողմերը պարտավորվում են անհապաղ սկսել բանակցություններ Պայմանագրի կնքմամբ Կողմերի ակնկալած արդյունքին հասնելու նպատակով հնարավոր գործողությունների կատարման ուղղությամբ:

10.5 Այն դեպքում, երբ Անհաղթահարելի ուժի առկայության հետևանքով Պայմանագրի կնքման պահին ակնկալվող արդյունքին հասնելու նպատակով Կողմը պետք է կատարի անհամաչափ ծախսեր, ապա այդ Կողմն իրավասու է Անհաղթահարելի ուժի գործողության եռամսյա ժամկետը լրանալուց հետո միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին Պայմանագրի լուծման ենթադրյալ պահից երեսուն օր առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

11 Այլ պայմաններ

11.1 Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրված փաստաթուղթ կազմելու միջոցով:

11.2 Գործակալն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ենթագործակալին: Ենթագործակալը, սույն կետով նախատեսված Գործակալի՝ Պայմանագիրը լուծելու մասին գրավոր տեղեկացումը ստանալու հաջորդ օրվանից դադարեցնում է սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ծառայությունների իրացումը և Գործակալին է փոխանցում իր անձնական հաշվի մուտքանունն ու գաղտնաբառը:

11.3 Ենթագործակալն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր տեղեկացնելով Գործակալին: Գործակալի կամ Ենթագործակալի կողմից Պայմանագիրը լուծելու պահից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կողմերը պարտավորվում են կատարել բոլոր անհրաժեշտ

գործողությունները փոխադարձ հաշվարկներ կատարելու, համապատասխան վճարումներ կատարելու համար:

11.4 Գործակալի կամ Ենթագործակալի կողմից Պայմանագիրը լուծելը հանգեցնում է սույն պայմանագրի դադարմանը: Պայմանագրի դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պահն ունեցած պարտավորությունների կատարումից:

11.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն Պայմանագրի հիման վրա ծագած պարտավորաիրավական հարաբերությունների կապակցությամբ առաջացած վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

11.6 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում Պայմանագրի առարկայի վերաբերյալ նախկինում Կողմերի միջև գրավոր, բանավոր կամ կապի ցանկացած միջոցներով ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները՝ բացառությամբ Կողմերի միջև կնքված հանձնարարության պայմանագրի:

11.7 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 8 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

11.8 Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են սույն պայմանագրի 12-րդ գլխում նշված Կողմերի հասցեներով՝ փոստային ծանուցման կամ առձեռն հանձնման միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

Գործակալ՝ lawyer@anrivagroup.com , online@anrivagroup.com

Ենթագործակալ՝ _____

11.9 Սույն պայմանագրի 11-րդ գլխում նշված վավերապայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին՝ համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերում է բանկային վավերապայմաններին և էլեկտրոնային փոստի հասցեին:

11.10 Պայմանագիրը կատարելիս Կողմերը ղեկավարվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

12 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործակալ	**Ենթագործակալ**
«ԱՆՌԻՎԱ-ՏՈՒՐ» ՍՊԸ	
ՀՎՀՀ՝ 00459822	ՀՎՀՀ՝
Պետական գրանցման համար՝ 278.110.756354	Պետական գրանցման համարը՝
Հասցե՝ ՀՀ, Երևան, Կոմիտաս 20	Հասցե՝
Բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ	Բանկ՝
Հաշվեհամար՝ 1510039927820100	Հ/Հ
Հեռ. ՝+374 (060) 611110, +374 (010)222865,	Հեռ. ՝
Էլ. հասցե՝ lawyer@anrivagroup.com online@anrivagroup.com	Էլ. հասցե՝
Տնօրեն՝ Հ. Ստամբուլյան	Տնօրեն՝